



ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ

Մեր ՅԱՋՈՐԴ
ԹԻՒՆ՝

ՈՒՐՔԱՑ,
19 ՍԵՊՏԵՄԲԵՐ
2003

«ԱՋԴԱԿ»Ի ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

P. ՏԱՐԻ

ԹԻՒՆ 5 (17)

ՕԳՈՍՏՈՍ 2003

bezdlg_mozdlg@hotmail.com

ԱՄՐԱՆ

ԱՐՁԱԿՈՒՐԴԻՆ ՁԱՆՁՐԱՆԱԼ

Ձեզի հետ պատահած է բնաւ, որ երկար ժամանակ դաս սորվելէ կամ բանով մը կրաղելէ ետք, երբ հանգիստի ժամը գայ, չգիտնաք, թէ ինչ պիտի ընէք:

Ամրան արձակուրդի ամիսներուն աւելի յաճախ կը լսուի «ճանճրացայ» բառը: Ճիշդ է, ամրան ատեն ճանճրանալը մեծ յանցանք մը չէ: Արձակուրդը ձմրան ամիսներէն պակաս աշխատելու եւ հանգիստի ժամանակն է, բայց այս չի նշանակեր, թէ բան մը պիտի չընենք:

Կը յիշէք, դասերու մէջ կորսուած օրերուն դասէ կատ որքան բան կ'ուզէիք ընել: Ընկերներու հետ ըլլալ, պտտիլ, խաղալ, կարդալ, կամ, ինչքան ոչ, հանգիստ ընել, երեւակայել եւ միտքէն պատմութիւններ հնարել: Ահաւասիկ առիթը՝ այս բոլորը ընելու:

Ուրախ արձակուրդ բոլորին:

ԱՐՁԱԿՈՒՐԴԸ, ԽԱՂԸ ԵՒ ՄԵՆՔ



Լոբա Եփրեմեան, Զ.Տոտարեկան

«Պէտք է դաս սորվիս», «Պէտք է կեդրոնանաս դասերուդ վրայ», «Եկո՛ւր, դաս սորվէ»: Այս խօսքերը մեր ճնողներէն յաճախ լսած ենք դպրոցական ինն ամսուան ժամանակաշրջանին:

Բիմա տակաւին ամառնային արձակուրդի մէջ ենք, այս խօսքերն ալ արձակուրդ առած են: Այսինքն՝ եթէ ձմեռը լաւ աշխատանք տարած էինք եւ


վիճակացոյցի արդիւնքը գոհացուցած էր մեր ճնողն ու մեզ, իրապէս արձակուրդը վայելելու իրաւունք ունինք:

Մեր տարիքի փոքրերուն համար ամէնէն լաւ արձակուրդը խաղն է՝ գնդակի խաղերով, հեծանիւով, մարզական, դաստիարակչական, համակարգիչի խաղերով, արձակուրդ է նոյնիսկ ոչինչ ընելու խաղով: Արձակուրդին ընթացքին մեր

իրաւունքն է միայն խաղալը, որպէսզի կարելի ըլլայ աշխուժութեամբ դպրոց վերադառնալ:

Ուրեմս մեր ճնողներէն այս օրերուն հաճելի պիտի ըլլար լսել, «Պէտք է խաղաս», «Պէտք է կեդրոնանաս խաղիդ վրայ», «Պա՛հ, խաղա՛ եւ հաճոյքը առ խաղին» խօսքերը: Ուրեմս, «Պատիկ-Մպտիկ»ի սիրելի ընթերցող, կուշտուկուր խաղա՛:

ملحق أزياءك





ԱՅՈՒՊ

ԺԱՄԱՆՅՈՒ ԵՒ ԴԱՍԸ ՄԻԱՑՆՈՂ

ՍԻ.ՏԻ.Ն՝ «ԱՅԳ»


Որքան հաճելի է մեզի սիրելի ժամանցով մը պրաղելու ատեն նաև նոր քաներ սորվիլ: Իսկ որքան անելի լաւ է, երբ այդ պրաղումը բոլոր մանուկներուն սիրելի դարձած համակարգիչն է, իսկ սորվելիքը՝ հայոց լեզուն:

հայ համակարգչական կեդրոնը պատրաստած է հայերէն սորվեցնող շատ հետաքրքրական ՍԻ.ՏԻ.Ն՝ «Այգ» անունով: 4 տարեկանէն վեր մանուկներու համար պատրաստուած «Այգ»ի առաջին ՍԻ.ՏԻ.Ն (առաջին մակարդակ) հաճելի ժամանցի կը վերածէ հայերէն տառերը սորվիլը եւ անոնցմով վարժութիւններ կատարելը:

«Այգ» ունի երեք բաժին.

- Առաջին բաժինը կը սորվեցնէ այբուբենի բոլոր տառերը՝ իրենց հնչիւններով եւ այդ տառերով սկսող նկարներով:

- Երկրորդ բաժինին մէջ կարգը գիրին է: «Այգ»ը ունի գեղազրուեան «տետրակ»: Յոյս կը տրուի, թէ այբուբենի որեւէ գիր ինչպէս կը գրուի, իսկ տպիչով կարելի է ունենալ գեղեցիկ գիր գրելու յատուկ թերթ մը:



- «Այգ»ի երրորդ եւ վստահաբար բոլոր մանուկները հետաքրքրող բաժինը խաղավայրն է: «Ուրախ ոգի» եւ «Տխուր գնդակ» խաղերով կարելի է խաղալ այբուբենի տառերուն հետ: Անոնք նաև առիթ են վերաբաղ ընելու նախապէս սորված տառերը:

ԻՆՉՊԷՍ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՍԻ.ՏԻ. ՄԸ

«Այգ»ի նման խտասալիկ մը պատրաստելը երկար աշխատանքի արդիւնք է: Ահաւասիկ՝ քանի մը կէտ.

1. Ամէն ինչ կը սկսի թուղթի վրայ
Նոյնիսկ համակարգիչի խտասալիկները թուղթի պէտք ունին: Թուղթի վրայ կը ճրագրուին անոր մասերը, կը հաւաքուին դաստիարակչական գիտելիքները եւ կը գրուին խաղերուն պատմութիւնները:
2. Թուղթէն՝ համակարգիչ
համակարգիչի վրայ կը փոխադրուին վերը նշուած բաժինները: Ամէն ինչ պէտք է շատ պարզ, յստակ եւ թիչ բառերով ըլլայ:
3. Ձայն եւ նկար
Կ'անելցուին առանց շարժումի եւ շարժուն նկարներ, եղանակներ, երգեր, ձայներ եւ խօսակցութիւն:
4. Ուշադիր փորձ
Խտասալիկ մը շուկայ իջնելէ առաջ պէտք է բավմաթիւ անգամներ փորձուի, որպէսզի անսխալ ձեւով հասնի գործածողին:



5. հաւաքական երկար աշխատանք
«Այգ»ի նման խտասալիկ մը պատրաստելը կը կարօտի շուրջ ամիսներու կեդրոնացած աշխատանքի: Ան արդիւնքը կ'ըլլայ համակարգիչ ճրագրողին, լեզուաբանին, մանկավարժին, գծագրողին եւ խօսնակին հաւաքական աշխատանքին:

ՔԱՊԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

- Կիպերիոյ մէջ 14 տարիէ ի վեր տեղի ունեցող քաղաքացիական պատերազմը աւարտելու վրայ է: 11 Օգոստոսին ափրիկեան այս երկրին նախագահ Չարլզ Մէլլըր, ենթարկուելով այլ երկիրներու ճնշումներուն, հեռացաւ երկրէն: Ան իշխանութիւնը փոխանցեց փոխ նախագահ Մոսըս Պլայի: Կիպերիա, որ 19րդ դարու կէսերուն Ամերիկայի կողմէ սեւամորթ գերիներուն տրուած ապատութեան երկիրն էր, ներկայիս կը դիմագրաւէ սով եւ վտանգաւոր հիւանդութիւններու համաճարակ:

- Իրաքի մէջ Յուլիսին սպաննուեցան նախկին նախագահ Սատտամ Հիւսէյնի երկու զաւակները՝ Ուտայ եւ Քուսայ: Միւս կողմէ, Իրաքի տարածքին կը շարունակուին ամերիկացի զինուորներուն դէմ յարձակումները: Ամերիկեան զօրքերը կը ձեռքալայնեն մեծ թիւով իրաքիներ:

- «Թըրմիւնէյթըր» ժապաւններուն աստղը՝ Առնոլտ Ճուարցնիկըր յայտարարած է, թէ Միացեալ Նահանգներու Քալիֆորնիոյ կառավարիչի պաշտօնին համար իր թեկնածութիւնը պիտի դնէ: Ընտրութիւնը տեղի պիտի ունենայ հոկտեմբերին:

- Ֆորմիկա 1ի աշխարհի ախոյեան Մայքըլ Ճումախըր յառաջիկայ ամիսներուն պիտի ստանձնէ նոր պաշտօն մը: Ան պիտի ըլլայ Սան Մարինօ փոքր երկրին դեսպանը եւ պիտի վրադի բարեսիրական աշխատանքներով:



ԱՅՄՈՑՄ

Մենք Կը ԽԱՂԱՆՔ... ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մարդիկ կը խաղան ոչ միայն իրենց մանկութեան տարիներուն, այլ նաեւ՝ մեծ-նախնիները: Ժամանակի ընթացքին մանկութեան խաղալիքներուն տեղը կ'առնեն ընկերային խաղերը, միտք աշխատցնող խաղերը, բախտի խաղերը եւ այլն:

Խաղերը գոյութիւն ունեցած են հազարաւոր տարիներէ ի վեր, սակայն մարդուն նման անոնք ալ ունին իրենց կեանքը: Ծնած են նոր խաղեր, կորսուած են ուրիշներ, իսկ կարգ մը խաղեր ալ փոխուած են:

Ահա խաղերու պատմութենէն քանի մը օրինակներ.

- 1895 թուականին եգիպտոսի մէջ գտնուած է Քրիստոսէ առաջ 5200 թուականին մահացած երեխայի մը գերեզմանը: Բոն գտնուած է մեկի ծանօթ ամէնէն հին կոնախաղը:

- Ամէնէն հին խաղերէն մէկը հասած է Միջագետքի Ուր քաղաքէն: 4000 տարուան հնութիւն ունեցող այս խաղը խճաքարերով կազմուած տախտակ մըն է, որուն վրայ իրաքանչիւր խաղացող պէտք է շարժեր վեց խաղեր, բոլորի ձեւով վեց կառեր նետելէ ետք:

- Եգիպտոսի մէջ Քրիստոսէ առաջ 3000 թուականին խաղացուած սէնթը եւ մէհէնը

օճի խաղին եւ բադի խաղին ամէնէն հին ձեւերէն են:

- Գիտէ՞ր, թէ մեկի ծանօթ եօ-եոն կը խաղային հին Յունաստանի մէջ: Յունական կաւէ հին սափորներուն վրայ գծուած են եօ-եոյի խաղեր:

- Ճատրակի խաղը հնարուած է Բնդկաստանի մէջ, ուր ան կը կոչուէր «Չաթուրան-կա», որ կը նշանակէ չորս թագաւորներով խաղը: Գետազային խաղը անցած է Պարսկաստան, ուր քիչ մը փոխուած եւ վերածուած է շախմատի, որ պարսկերէնով կը նշանակէ թագաւորը մեռաւ:

- Կոյի խաղը եկած է Ծայրագոյն Արեւելքէն: Ճատրակին նման այս ալ ռազմագիտական խաղ մըն է: Ճափոներէնով կօ կը նշանակէ թէ՛ «շրջապատումի խաղ» եւ թէ՛ «հողամասի տիրապետութիւն»:

- Մեր բոլորին ծանօթ մոնփոլին հնարուած է վերի խաղերէն շատ աւելի ուշ, 1933 թուականին, ամերիկացի Չարլզ Տերոյի կողմէ: Անգործ Տերօ այս խաղին շնորհիւ դարձած է աշխարհի ամէնէն շատ ծախուած խաղերէն մէկուն հեղինակը եւ... հարստացած է:

ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

- 100րդ Ֆրանսայի ճրջավազը ունեցաւ հետաքրքրական աւարտ: Զօրաւոր մրցակցութենէ ետք 27 Յուլիսին ամերիկացի Լէնս Արմսթրոնկ յաջորդաբար 5րդ տարին ըլլալով դարձաւ ախոյեան:

- Դարձեալ 27 Յուլիսին Սպանիոյ մէջ աւարտեցաւ լողի աշխարհի մրցումները: Մարսիկները հաստատեցին 13 նոր մրցանիշներ: Միացեալ Նահանգներ խլեցին 12 ոսկի, 13 արծաթ եւ 6 պրոնզ մետալներ: Ամերիկացի Մայքըլ Ֆելիս թէ՛ շահեցաւ 3 ոսկի մետալ եւ թէ հաստատեց 5 նոր մրցանիշներ: Իսկ իր երկրին մէջ տեղի ունեցող ախոյեանութեան մրցումին Մայքըլ Ֆելիս կոտրեց Սպանիոյ իր մրցանիշներէն մէկը եւ հաստատեց նոր մրցանիշ մը:

- Ճատրակի աշխարհի ախոյեան Անաթոլի Քարփով Յուլիսին այցելեց ռուսական բանտ մը եւ մրցեցաւ տասը բանտարկեալներու հետ: Ան արձանագրեց մէկ հաւասարութիւն եւ ինն յաղթանակ:


ՕՐԱՏԵՏՐ

ՊԻՊԼՈՍԻ ՓԱՌԱՏՕՆԸ

Ժիպլիի գեղեցիկ ճովեպերը կետեղուած բեմի մը վրայ 22 Օգոստոսէն 7 Սեպտեմբեր ելոյթ պիտի ունենան նշանաւոր արուեստագէտներ: Պիպլոսի փառատօնին այս տարուան յայտագիրը ծոխ է: Բոն կան արաբ հռչակաւոր երգիչ Ում Քալսումի նուիրուած «Ում» թատերախաղը, Փինք Ֆլոյտի, Էրիք Քլեփթընի եւ այլ երգիչներու երգերը Գրիգորեան ոճով երգող երգչախումբը, պարեղանակներ նուագող «Կոթան Փրոճէքթ» խումբը, «Պլայնտ պոյզ աֆ Ալպամա» խումբը եւ այլ արուեստագէտներ:

ՊԵՂԻՆ ՍՈՒՋԱՆԱԻԸ

Լսա՞ճ էք Պիթըրկ խումբի «Ելօ սապմըրին» («Դեղին սուլանաւ») երգը: Այս անգամ տարբեր դեղին սուլանաւ մը իր խրիսխը նետած է Պէրուի ճովեպերը, «Մո-



վընփիթ» պանդոկին մօտ: Առաջին անգամ ըլլալով իրանացի երեխաները առիթ պիտի ունենան սուլանաւու մը մէջէն վայելելու իրանանեան ճովուն յատակը գտնուող հետաքրքրական տեսարանները, ծուկի տեսակները, գոյնզգոյն քարերը եւ ճովային բոյսերը:

ԷՔՍՅՈՒՄ ԷՏՎԵՆՉԸՐ ՓԱՌԲ

Ամրան տաք օրերուն Իվ չի սիրեր երթալ

լուսնապարտէզ եւ խաղալ արկաճախնդրական խաղեր: Իսկ եթէ այդ խաղերը ջուրով են, խաղալու ատեն կարելի է նաեւ զովանալ:

Գետաքրքրական ջուրով խաղերու պարտէզ մը հաստատուած է Պիեկի բակին մէջ: Էքսթրիմ էտվենչըր փարթ ունի հետաքրքրական 24 խաղեր, որոնցմով կարելի է ուրախանալ մինչեւ Օգոստոսի վերջը:

Նշենք, որ էքսթրիմ էտվենչըր փարթի խաղերը կը շրջին վանապան երկիրներ:



ՄՅԱՅՐԱՆ

ԿԱՐԾ ԼՈՒՐԵՐ

- Յուլիս ամսուան ընթացքին տեղի ունեցաւ բջիջային հեռա-
ձայններով նամակներ դրկելու
Ողիմպիական խաղերը: Առաջին
երեք դիրքերը գրաւողները շա-
հեցան... բջիջային հեռաձայններ:

- Եթէ շատ կը սիրէք անա-
սունները, խնդրեցէք ձեր ճնողնե-
րէն, որ իրենց բջիջային հեռա-
ձայններուն կանգերուն փոխարէն
դնեն... անասունի կանչեր: Բա-
մայանցէն կարելի է գնել առիւծի,
խոզուկի, թութակի եւ 40 այլ
անասուններու ձայներ, ինչպէս
նաեւ՝ թռչունի երգեր:

- Իրլանտայի մէջ ճամոնին
գինը պիտի սղի: Կառավարու-
թիւնը որոշած է անոր վրայ
տուրք դնել՝ պայքարելու համար
գետին նետուած մեծ թիւով ճա-
մոններու դէմ, որոնք կ'աղտոտեն
երկրին մայրերը:

- Ինտոնեպիոյ մէջ Քոթա- Քո-
լայի ընկերութեան պաշտօնեա-
ները շինած են մեծ բեռնակառք
մը: Անոնք գործածած են Քոթա-
Քոլայի 57 հազար պարապ շիջ:
Այս աշխատանքը տեւած է 19 օր:

- Գիտնականներուն ճանօթ
ամէնէն ճեր հոյամողէզը ապրած է
210 միլիոն տարի առաջ: Ան
գտնուած է Բարաւային Ափրիկէի
մէջ: Այս բուսակեր հսկան իր ժա-
մանակի ամէնէն մեծ անասունն
էր իր 10 մեթր երկայնքով եւ 1.8
թոն ճանրութեամբ:

ԹՌՉՈՂ ՄԱՐՈՂԸ



Ռօսքը Սիւփըրմէնին մասին չէ, այլ՝
աւստրիացի Պոմկարթներին, որ եղաւ
պատմութեան մէջ առաջին թռչող մարդը:
Ան 30 Յուլիսին առանձինն օդին մէջ
թռչելով անցաւ Անգլիոյ Ջրանցքին մէկ
ճայրէն միւսը:

Իր կռնակին վրայ թռչելու գործիք մը
կրող Պոմկարթները ինն հազար մեթր
բարձրութեան վրայ օդանաւ մը վար
նետուեցաւ եւ մնացած ճամբան... թռչելով

շարունակեց:

Ան թռիչք առաւ անգլիական ճովեյեր-
եայ Տուվըր քաղաքէն եւ էջք կատարեց
ֆրանսական Քալէ նաւահանգիստը: Թռչող
մարդուն ժամական արագութիւնը 200 քմ.
էր: Գետին հասնելէ ետք ուրախ արկա-
ճախնդիրը ըսած է, թէ այդ բարձրութեան
սաստիկ ցուրտին պատճառով իր մարմի-
նը տակաւին թմրած կը պգայ:

ՔՐԱՔԷՆԸ՝ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԱՆԱՍՈՒՆ ՄԸ

Քրաքէնը հսկայական ընգղայ մըն է,
որուն մասին կը լսենք հիւսիսային եւրոպայի
առասպելներուն մէջ: Նաւաստիներու բազմա-
թիւ պատմութիւններ կը պատմեն այս ճովա-
յին հրէշին մասին, որ կրնայ նաև մը ընկղմել
իր «բողկուկները» անոր շուրջ փաթեթով:
Այս պատմութիւններէն ոչ մէկը ստուգուած է:
Բակառակ ասոր, այս անասունին հետե-
ւանքները մենք կը գտնենք հին գրութիւննե-
րու մէջ: Սակայն մինչեւ այսօր գտնուած նոյ-
նիսկ ամէնէն մեծ ընգղաները չեն հասնիր
քրաքէնին չափերուն:

Չիլիի ափերուն խրած 13 թոն կշռող եւ
13 մեթր երկայնք ունեցող ընգղան կրնայ
ըլլալ, որ քրաքէնն է: Այս հսկայական անա-
սունին մէկ ազգականը նշմարուած էր միայն



1896 թուականին, երբ նման ընգղայ մը
գտնուած էր Միացեալ Նահանգներու մէկ ճո-
վափին վրայ:

Այս դէպքը կը փաստէ, թէ ովկիանոսներուն
խորքը տակաւին շատ գաղտնիքներ կան...

ԳՈՐԾԻ ԺԱՄՈՒՆ... ՔՆԱՆԱՆՔ

Ինչպէս գիտենք, քունը շատ
կարեւոր է մարմնին եւ մտքին
համար: Նոյնքան կարեւոր է կէ-
սօրէ ետքի հանգիստը կամ կարճ
քունը: Ուսումնասիրողները
գտած են, թէ կէսօրէ ետք ժամը
1:00էն մինչեւ 3:00 մարմինը

կը հասնի իր յոգնութեան գա-
զաթնակէտին: Այդ ժամերէն ետք
20 - 40 վայրկեան տեւողու-
թեամբ հանգիստը կը վերա-
դարձնէ մարդուն աշխուժութիւնը:
Սակայն ամբողջ օրը աշխա-
տողները ինչ պիտի ընեն:

Ֆրանսայի մէջ սկսած է աշ-
խատանոցներու մէջ հանգիստի
սենեակներու շինութիւնը:

Կէսօրուան ժամերուն գործա-
տրները եւ պաշտօնեաները կարճ
հանգիստ մը ընելով՝ կէսօրէ ետք
շատ աւելի արդիւնք պիտի տան

իրենց աշխատանքներուն մէջ:

Այս հանգիստը նոյնիսկ պար-
տադիր դարձած է կարգ մը
պաշտօնեաներու, ինչպէս՝ օդա-
չուններու համար, որոնք իրենց
գործի պահուն բնաւ յոգնած եւ
քնոտ պէտք չէ ըլլան:



ԱՌՈՅԳ ԵՆ ԿԱՅՏԱՌ

ԱՌՈՅԳ ԵՆ ԿԱՅՏԱՌ



Թէեւ դպրոցական տարեշրջանը շատոնց աւարտած է եւ անոր հետ վերջ գտած են նաեւ մարզանքի դասապահերը, սակայն այս չի նշանակեր, թէ ամառը պէտք է առանց մարզանքի մնանք: Իրականութեան մէջ, ամառը ամէնէն յարմար ժամանակն է մարզախաղ մը կիրարկելու եւ, ինչքէն չէ, սորվելու նոր մարզածեւ մը:

Այսպիսով մարմնիդ ճկունութիւնը եւ կայտառութիւնը չես կորսնցներ:

Մարզանք մը կիրարկելը առիթ կու տայ քեզի, որ լաւ ծանչնաս քու մարմինդ: Ուրեմն նաեւ պիտի սորվիս չափ ու սահման դնել քու ֆիզիքական ծիգերուդ եւ աշխատանքներուդ: Մարզախաղի մը մէջ յառաջդիմելու համար պայման է, որ գիտնաս մարմնիդ տկար եւ պորաւոր կէտերը:

ԱՐԴԱՐ ԽԱՂԻ ՍԿՋՐՈՒՆՔ

Կը պատահի, որ մարզախաղի մը ընթացքին յաղթողներուն նախանձիս: Ասիկա բնական է: Բայց միշտ ի մտի ունեցիր, որ մարզանքը նախ եւ առաջ աշխուժացնելու եւ հաճելի պահեր պարգեւելու համար է:

Մարզախաղերուն թիւ մէկ օրէնքը խաղին

սկզբունքները յարգելն է: Արդար խաղի սկզբունքը պէտք է ունենաս թէ՛ քու խմբակիցներուդ եւ թէ՛ հակառակորդ խումբին խաղացողներուն նկատմամբ:

ՄԿԱՆ ՏԱՔՅՆԵԼՈՒ ՊԱՅԸ

Մարզախաղէն առաջ տասը վայրկեան մկանների տաքցուր, այսինքն՝ ցատկէ, թեթեւ շարժումներ կատարէ: Այսպիսով սրտիդ վարկերը կ'արագացնես, մկանների կ'արթնցնես եւ կը նուազեցնես վիրաւորուելու վտանգը:

ՋՈՒՐԸ՝ ԱՆՈՐԱԾԵՑ

Մարզանքի պահուն մարմնիդ շատ կը տաքնայ: Մարմնիդ ջերմաստիճանը պահպանելու համար մարմնիդ ջուրը կը շոգիանայ մորթիդ միջոցով: Եթէ ճարաւ պզաս, շատ փոքր քանակով ջուր խմէ:

...

ՋՈՒՐԻՆ ՄԵՋ ԽԱՂԱՆՔ

Յաջորդ անգամ, երբ ընկերներով լողաւազան երթաք, ձեզի հետ տարէք մեծ թիւով ճփացող առարկաներ. լողալու անիւ, փինկ-

փոնկի գնդակ, խցան, կերպընկալէ պարապ շիշ...

- Իւրաքանչիւր խաղացող իր անծեռոցը կը բանայ եւ կը դնէ աւազանին ճայրը:

- Խաղը վարողը ճփացող առարկաները ջուրին մէջ կը նետէ:

- Երբ խաղը վարողը նշան կու տայ, բոլոր խաղացողները պէտք է ջուր նետուին: Անոնք իրենց անծեռոցներուն վրայ պէտք է պետեղեն ճփացող առարկաները: Իւրաքանչիւր անձ ամէն անգամ միայն մէկ առարկայ կրնայ բերել:

- Կը յաղթէ ան, որ ամէնէն մեծ թիւով առարկայ «որսացած» կ'ըլլայ:



ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՏՈՒԿ ԺԱՊԱՒԵՆՆԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՏՈՒԿ ԺԱՊԱՒԵՆՆԵՐ

Մանուկ ու պատանի հանդիսատեսները ամրան արձակուրդի օրերուն կրնան ուղղուիլ շարժապատկերի սրահները եւ դիտել հետեւեալ ժապաւէնները.



★ «ՓԻԿԼԵԹՅ ՊԻԿ ՄՈՒՎԻ»

Ճատ սիրուած Ուինի արջուկը եւ իր ընկերները այս ժապաւէնին մէջ կը շարունակեն իրենց արկածախնդրութիւնները: Այս համակրելի հերոսները խաղի մը ընթացքին կը կորսնցնեն իրենց փոքրիկ ընկերը՝ Փիկլէթ խոզուկը եւ կ'որոշեն վայն փնտռելու երթալ: Անոնք դէպի Փիկլէթը տանող ճամբան կը գտնեն շնորհիւ խոզուկին գձագրութեան տետրակին:

★ «ՏԷՍԻ ՍԵՂ ՔԵՂ»

Ծիծաղաշարժ այս ժապաւէնին մէջ երկու անգործ հայրեր կ'որոշեն բանալ մանուկներու հոգատարութեան կեդրոն մը: Անոնց թշնամին կը դառնայ երեխաներու մեծ դպրոցի մը տնօրէնուհին: Գլխաւոր դերասան էտի Մըրֆիի շուրջ հաւաքուած են մեծ թիւով փոքրիկ դերասաններ, որոնք կը ստեղծեն զուարճալի պահեր:

Your First step to Learn Armenian

Այբուբեն - Alphabet
Գեղագրութիւն - Calligraphy
Խաղեր - Games

LEVEL ONE For Windows 98/ME/2k/XP

Շայ Շամակարգչական Կեդրոն
Armenian Information Technologies
Ստանալու համար դիմել,
հեռ.: 01/258283 եւ 03/885623
www.altcenter.net - E-Mail: info@aitcenter.net



ԳՆՈՂՈՐ

ԻՆՉ ԿՐ ԱՏԱԾԵՍ

10-15 բառով կարճիքի տո՛ւր հետևեալ նիւթին մասին:
Պատասխանները հասցնել «ԱԶԴԱԿ»ի խմբագրատուն մինչեւ հինգշաբթի, 11 Սեպտեմբեր 2003:

♦ Ինչ է քու նախասիրած խաղը, խաղալիքը: Ինչու:

Նախորդ հարցումին կարճիքները

Մշակոյթը կ'օգնէ գիտնալու, թէ ի՞նչպէս ճշունդ առիւթ ու գոյատեւեցիւնք, եւ թէ ի՞նչպէս կրնանք յարատեւել, պահել մեր մշակոյթը ապագային:

ԹԱՄԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ
14 տարեկան

Լաւ է, որ մարդիկ հետաքրքրուին մշակոյթով, որովհետեւ մշակոյթը կրնայ մարդուն ճաշակը, միտքը փոխել, ապնուապնել հոգին, ինչպէս նաեւ՝ ընդհանուր կարգացումը աւելցնել:

ԴԱԼԱՐ ՊՈՅԱԾԵԱՆ
10 տարեկան


Մշակոյթը ցոյց կու տայ, թէ ի՞նչպէս ապրեցանք, դարձանք քաղաքակիրթ ժողովուրդ:

ՊԱՐՊԱՐԱ ՅԱԿՈԲԵԱՆ
12 տարեկան


Ժամանցին պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ակդակ»ի ճաբաթ, 16 Օգոստոս 2003ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 16Ի ԾԱՌՈՂՈ


Բարցարան թիւ 16ի շահողը **Իրակ Ոսկերիչեան** (11 տարեկան, «Բայ Աւետ. Բարձրագոյն Վարժարան»էն) շահեցաւ անցեալ ամստան մրցումը: (Պատասխաններուն մէջ նկատի չէ առնուած 2րդ հարցումը): Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ակդակ»էն, «Ճաղվոյեան» կեդրոն:



Կէտերը իրարու միացուր 1 - 47 հասկնալու համար, թէ ինչ կ'ընէ Պլտիկ-Մպտիկ:



Կրնա՞ս օգնել Պլտիկ-Մպտիկին հասնելու մինչեւ գնդակը:



Կրնա՞ս շարել այս մարզանքի կօշիկները ամէնէն պլտիկէն ամէնէն մեծը:



Եթէ թենիսի գնդակ մը=40 կրամի, փինկ-փոնկի ռաբէթ մը= 220 կրամի, եւ փինկ-փոնկի փետուր մը=10 կրամի, որքա՞ն է այս բոլոր առարկաներուն կշիռը: Իսկ որքա՞ն կը կշռեն փետուրները եւ թենիսի գնդակները:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 17

1.- Ո՞ր երկրէն ճագած է ծատրակը:

2.- Ո՞վ է Թաթուկը:

3.- Ո՞վ եղաւ Ֆրանսայի 2003ի շրջավապի ախոյեան

Ամստան հարցումին կրնան մասնակցիլ 6էն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք վայն հասցնել «ԱԶԴԱԿ»ի

խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցումը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

Անուն - Մականուն

Վարժարան

Ծննդեան թուական

Բեռածայնի թիւ



ԿԱՌՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՆԵՐԸ՝ ԳԻՐՔԵՐՈՒ ԻՆՏԵՆՍԻՎ

Պատմության ընթացքին յաճախ կը յայտնուին հերոսներ, որոնք կարելի էր կը խաղան ազգին պայքարում եւ անկախության մէջ: Պատմության այս հերոսները կրնան եկած ըլլալ թագաւորական կամ իշխանական ընտանիքներէ եւ կամ կրնան ըլլալ պարզ ժողովուրդի պատկերներ:

Բայց պատմութիւնը հարուստ եղած է իրենց հայրենիքին համար կռուած եւ պահուած հերոսներու պատմութիւններով: Մեր թագաւորներէն եւ իշխաններէն շատեր հայրենասիրութեան օրինակներ են մեզի համար: Յիշենք Արշակ Բ. թագաւորը, Վարդան Մամիկոնեան սպարապետը, Թաթուլ իշխանը, Թորոս Լեւոնի իշխանը, Դաւիթ Բէկը եւ շատ ուրիշներ: Անոնք սիրած են ժողովուրդին կողմէ եւ իրենց հայրենասիրութեան ու քաջութեան համար վերածուած են հերոսի:

Բայ գրականութեան մէջ կան մեծ թիւով բանաստեղծութիւններ, պատմուածքներ, վիպակներ եւ վէպեր, ուր գլխաւոր կերպարները հայ հերոսներն են: Անոնցմէ նշենք Սողոմոն Տարօնցիի «Տուղրիլ եւ Թաթուլ» բանաստեղծութիւնը, որ կը պատմէ հայ



Թաթուլ իշխանին հայրենասիրութիւնն ու քաջութիւնը:

Ինչպէս մեր նախորդ թիւին մէջ ըսած էինք, համապատասխան հրատարակած է «Թաթուլ եւ Տուղրիլ» վերնագիրով պատմուածքի պատկերազարդ գրքոյկ մը, որ կը պատմէ հայ իշխանին կռիւները՝ իր հայրենիքին վրայ յարձակած սելճուք Տուղրիլին դէմ: Այս էջով կու տանք այս գրքոյկէն բաժին մը:

Թաթուլ իշխանին հայրենասիրութիւնն ու քաջութիւնը:

Ինչպէս մեր նախորդ թիւին մէջ ըսած էինք, համապատասխան հրատարակած է «Թաթուլ եւ Տուղրիլ» վերնագիրով պատմուածքի պատկերազարդ գրքոյկ մը, որ կը պատմէ հայ իշխանին կռիւները՝ իր հայրենիքին վրայ յարձակած սելճուք Տուղրիլին դէմ: Այս էջով կու տանք այս գրքոյկէն բաժին մը:

ԹԱԹՈՒԼ ԵՒ ՏՈՒՂՐԻԼ

Վայրի աղաղակով յառաջացան սելճուքները:
Բոլորէն առաջ կ'արշաւէր արնաճարաւ երթէջը:
Բայ վիճուորներու շարքին էր քաջակորով ու դիւցապնակերպ Թաթուլը:

Բայերն ալ նետուեցան դէպի թշնամին:
Անոնց առջեւէն կ'արշաւէր Թաթուլը:
Ահաւոր ու անխնայ կռիւ մը տեղի ունեցաւ: Խորտակելով ամէն դիմադրութիւն՝ դէմ յանդիման ելան երթէջն ու Թաթուլը: Որսի ելած գայլի նման փայլեցան երթէջին աչքերը: Ան առաջ նետուեցաւ, որ նիվակով հարուածէ Թաթուլը: Թաթուլ վահանի ծարպիկ շարժումով շեղեց հարուածը եւ իր կարգին ամենի ուժով հարուածեց երթէջը: Երթէջ կոկորդէն վիրաւորուեցաւ եւ վար ինկաւ ծիւն:

Սելճուքները մեծաթիւ խումբերով յարձակեցան Թաթուլին վրայ: Անոնք տեսան, որ չեն կրնար ուժով ու ծարպիկութեամբ յաղթել հայ քաջորդիին, օղապարաններ նետեցին ու վայն գերի բռնեցին: Սելճուքները իրենց հետ տարին մահամերձ երթէջն ու գերի Թաթուլը եւ սարսափով ներկայացան Տուղրիլին: Ծեր սելճուքը ցաւէն

տնքաց, սակայն սիրտը յոյսով ամրացաւ՝ թերեւս երթէջը բուժուի եւ ապրի...

Տուղրիլ նահանջեց անառիկ կարսէն:
Տուղրիլ արքային ջարդուած զօրքը արագ կ'ընթանար, կարճեւ կը թռչէր՝ իրեն հետ տանելով վիրաւոր երթէջը եւ քաջքշելով շղթայակապ Թաթուլը: Ձին կը քաշէր Թաթուլին պարանոցէն կապուած շղթան՝ ցալցնելով անոր վիպը, իսկ քարերը կ'արիւնտէին անոր մերկ ու բուպիկ ոտքերը: Սակայն Թաթուլ յաղթողի հպարտ կեցուածքը կը պահէր:

ՎՐԻՊԱԿ

Մեր նախորդ թիւին այս էջով գրուած «Տուղրիլ եւ Թաթուլ»-ը պէտք է կարդալ «Թաթուլ եւ Տուղրիլ», իսկ նոյն պարբերութեան եւ էջ 6ի հարցարան թիւ 10ի 2րդ հարցումին Տուղրիլ բառերը փոխարինել Թաթուլով:



ԴՊՐՈՑԱԿԱՆ

ՊԱՐՏԵՐԱ

ՄԻՋ –

Պարտեպիս մէջ մեխակ մը.
 Մով թերթերով մանուշակ մը:
 Ամէն օր հոն կը պտտիմ.
 Ծառ ու ճաղիկի մէջ կը նստիմ:
 Կանաչութիւնը գեղեցկութիւն է.
 Աչքիս համար հանգստութիւն է:
 Ունի ճառ, խոտ եւ ճաղիկ
 Ու տերեւներ անուշիկ:
 Ծատ կը սիրեմ պարտեպս.
 Իմ անուշիկ աշխարհս:

ԱԼԻՆ ՊԱՐՏԱԳՃԵԱՆ
 12 տարեկան

ՆԱՄԱԿՆԵՐ՝ ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԷՆ

Սիրելի՛ «Պպտիկ-Մպտիկ».
 Մենք շատ օգտուեցանք այս թերթէն, որովհետեւ մէջը
 շատ նիւթեր կրցանք գտնել, նաեւ՝ մեր գծագրութիւնները
 եւ գրութիւնները:

ՆԱՅԻՐԻ ՔԵՏԻՃԵԱՆ
 10 տարեկան
 Ազգ. Սուրէն Խանամիրեան վրձ.

ԱՄԱՌԸ

Ես ամէն տարի անհամբեր կը սպասեմ ամրան: Ծատ կը սի-
 րեմ այս եղանակը, քանի որ ամրան հետ կը սկսին դպրոցական
 արձակուրդները եւ կրնանք ապատ-ապատ գիւղ ելլել, ճով երթալ,
 հեռատեսիլ դիտել, «Պպտիկ-Մպտիկ» կարդալ, համակարգիչ
 խաղալ... եւ այս բոլորը ընել առանց դասերը մոռնալու...


Ես միայն ամրան տաքը չեմ սիրեր:
 ԴԱԼԱՐ ՊՈՅԱՃԵԱՆ, 10 տարեկան



Սեւակ Թաջճեան, 7 տարեկան,
 Մոնրէալ, Քանադա



Սարայի Սազարեան, 10 տարեկան



Անի Թասխաթեան, 7.5 տարեկան,
 Այնճար

★ ՈՒՃԱԴՐՈՒԹՅՈՒՆ ★

Բոլոր այն աշակերտները, որոնք կը փափաքին
 գծագրութիւններ դրկել «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ին, որպէսզի
 կարելի ըլլայ նկարը ամբողջութեամբ արտատպել,
 թող հաճին նկատի ունենալ առանելագոյնը հետեւեալ չափը.

29,5 սմ x 21 սմ:

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝
bezdig_mezdig@hotmail.com
 կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ի
 խմբագրութեան, «ԱԶԴԱԿ»
 «Ճաղկոյեան» կեդրոն